ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱՆ ԻՐԱՆՈՒՄ 1905—1911 ԹԹ.

Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

1905 թ. ռուսական հեղափոխության ազդեցության տակ Օսմանյան կայսրությունում ծայր էին առել ազգային-ազատագրական և սոցիալական բնույթի բուռն շարժումներ աբդուլհամիդյան բռնակալական վարչակարգի դեմ։ Ազգային և սոցիալական ճնշման դեմ պայքարը հատկապես լայն թափ ընդունեց Արևմտյան Հայաստանում[1], Բալկաններում և կայսրության արաբական վիլայեթներում[2]։ Անհանգիստ վիճակ էր տիրում նաև թուրք-իրանական սահմանների մոտ, որտեղ հաճախակի տեղի էին ունենում տեղական քրդական բնակչության հարձակումներ թուրքական զինվորների վրա[3]։ Կառավարության ծանր հարկային լծից ազատվելու համար քրդերը մասսայաբար սկսեցին տեղափոխվել Իրան։ Հուզումներ սկսվեցին նաև կենտրոնական Անատոլիայի թուրքական բնակչության շրջանում։ Նույնիսկ մայրաքաղաքում նավատորմի սպաներն ու նավաստիները 1906 թ. հունվարին ապստամբելով կառավարության դեմ, ցույց կազմակերպեցին սուլթանի պալատի առջև[4]։

Սուլթանական կառավարության համար այս շարժումները առավել սպառնալից բնույթ էին ընդունում այն պատճառով, որ հաճախ բռնակալության դեմ պայքարը միավորում էր տարբեր ժող ովուրդների։ Այսպես, 1905 թ. Դերսիմի քրդերի ապստամբությունը պաշտպանություն դտավ շրջակա հայ բնակչության կողմից, Հարավային Քուրդիստանում քրդերը պայքարի ելան արաբների հետ համատեղ, կայսրության արևելյան և արևմտյան վիլայեթների ժողովուրդների միջև փորձեր էին արվում կապեր հաստատել համատեղ և միաժամանակյա ելույթների համար և այլն։

Հեղափոխության ալիքը սկսեց ներխուժել Թուրքիա ոչ միայն Ռուսաստանից, այլև հարևան Իրանից։ «Ասիայի զարթոնքի» դարաշրջանում Արևելքի մահմեդական երկրներից Իրանը առաջինն էր, որ ընդվզեց միապետական-բռնակալական կարգերի դեմ։ 1905 թ. դարնանից այստեղ սկսվեցին հեղափոխական խմորումներ, որոնք դեկտեմբեր ամսից ընդունեցին կազմակերպված շարժման բնույթ։

---

[1] *Արևմտյան Հայաստանում հայկական հուզումների կենտրոններ էին հանդիսանում գլխավորապես Էրզրումի, Վանի և Բաղիշի վիլայեթները, ինչպես նաև Սասունի շրջանը։ Տե՛ս օրինակ,* «Геноцид армян в Османской империи». Сборник документов и материалов, под редакцией проф. М. Г. Персисяна, Ереван, 1966, *Ե. Ղ. Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Երևան, 1964, Ջ. Ս. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967,* Ю. А. Петросян, Младотурецкое движение, М., 1971 *և այլ աշխատություններ։*

[2] Центральный государственный военно-исторический архив, ф. 2000, оп. 1, д 1002, *թ. 3 (այսուհետև՝* ЦГВИА).

[3] *Նույն տեղում, թթ. 1—2։*

[4] *«Մշակ», 1906, 14 հունվարի, № 6, էջ 3։*

Սուլթան Աբդուլ Համիդ II-ը ոչ առանց հիմքի վախենում էր, որ իրանական հեղափոխությունը վարակիչ օրինակ կարող է հանդիսանալ նաև Թուրքիայի համար։ Այդ պատճառով նա որոշեց դիմել կանխարգելիչ միջոցառման՝ ջախջախել հեղափոխական շարժումն Իրանում և թույլ չտալ նրա ներթափանցումը Թուրքիա։ 1905 թ. նոյեմբեր— դեկտեմբերից թուրքական բանակը անցնում է իրանական սահմանը[5] և ձեռնամուխ լինում ինտերվենցիայի։ Բոլոր նշաններից երևում էր, որ Աբդուլ Համիդի կառավարությունը ծրագրել էր նաև զավթողական լայն քաղաքականություն Իրանում, որի նպատակն էր ընդարձակել կայսրության սահմանները իր արևելյան հարևանի հաշվին, մասնավորապես գրավել Իրանական Քուրդիստանը և Ատրպատականը և իրագործել պանիսլամիստական գաղափարը՝ սուլթան-խալիֆի գլխավորությամբ ստեղծել միասնական մեծ մահմեդական պետություն, որի կազմի մեջ պետք է մտնեին Օսմանյան կայսրությունը, Իրանը, Կովկասը և Թուրքեստանը[6]։

Դիմելով արտաքին զավթումների քաղաքականության, թուրքական կառավարող շրջանները հույս ունեին նաև բորբոքել կայսրության մահմեդական բնակչության ազգամաշունչ ոգին, շեղել նրա ուշադրությունը իր սոցիալ-տնտեսական ծանր կացությունից և միաժամանակ խոչընդոտել Ռուսաստանի ազդեցության մեծացումը հյուսիսային և հյուսիս-արևմտյան Իրանում[7]։

Իր ինտերվենցիան և էքսպանսիոնիստական ծրագրերն իրագործելու համար որպես հարվածող ուժ թուրքական կանոնավոր զորքերից բացի Ստամբուլը լայնորեն օգտագործում էր ինչպես տիրահռչակ համիդիե գնդերին, այնպես էլ Իրանի քրդական մի շարք ցեղերի (մանգուր, մամաշ, փիրան, շեքքաք և այլն)[8]։ Այդ ցեղերի շրջանում ֆեոդալական հարաբերությունների առկայությունը, բեկերի, խաների և աղալարների անսահմանափակ տիրապետությունը, քոչվորների ճնշված զանգվածների հետամնացությունը հանգեցրին նրան, որ Իրանում հեղափոխական շարժման զարգացմանը զուգընթաց ցեղերի նշանակալից մասը հանդես եկավ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հակահեղափոխության կողմում[9]։ Իրանում բնակչության լայն զանգվածներին քաղաքական պայքարից շեղելու, հեղափոխական շարժումը թուլացնելու և խեղդելու նպատակով թուրքական գործակալությունը ամենուրեք բորբոքում էր ազգային և կրոնական երկպառակություններ, հատկապես աշխատելով գրգռել քրդական աշիրեթների կրոնական ֆանատիզմը և ուղղել բնակչության այն զանգվածների դեմ, որոնք ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում հեղափոխական շարժմանը։ Պատահական չէ, որ պրոթուրքական տրամադրություններ ունեցող քրդական ցեղերը 1905 թ. սկսեցին կազմակերպել Ուրմիայի, Սալմաս-

---

[5] Yusub Hikmet Bayur, Türk inkilab Tarihi, cilt II, kisim IV, Ankara, 1952, էջ 86, Архив внешней политики России, ф. Посольство в Константинополе, 1904—1907 гг., д. 3541, թ. 21—22 (այսուհետև՝ АВПР).

[6] АВПР, ф. Персидский стол, 1906 г., д. 907, թ. 173—175։

[7] Տե՛ս Штаб Кавказского военного округа. Сводка сведений о сопредельных странах, добытых разведкой, Тифлис, 1911, № 3, էջ 26; ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1009, թ. 6—7։

[8] «Известия штаба Кавказского военного округа», Тифлис, 1907, № 20, էջ 38—39 (այսուհետև՝ «ИШКВО»).

[9] Г. Ильинский, Иранский Азербайджан в революции 1905—1911 гг. «Революционный Восток», 4 (38), 1936, էջ 201։

տի, Խոյի և մի շարք այլ շրջանների քրիստոնյա բնակչության և հատկապես հայերի ու ասորիների կոտորածներ[10]։ Այդ ջարդերը առանձնակի լայն չափեր ընդունեցին 1906 թ. գարնանից, երբ ասպատակություններին և մասսայական կոտորածներին սկսեցին մասնակցել նաև Թուրքիայից եկած համիդիե ջոկատները[11]։ Իրանական Ադրբեջանի արևմտյան շրջանների բնակչությունը ուղղակի խուճապի մեջ էր։ Հազարավոր մարդիկ, լքելով իրենց բնակավայրերը, հապշտապ հեռանում էին ավելի ապահով վայրեր։ Քրիստոնյաներից բացի ջարդերի ալիքը տարածվեց նաև ադրբեջանական շիա ազգաբնակչության վրա, որոնք հայերի և ասորիների հետ համատեղ ստիպված էին կազմակերպել ինքնապաշտպանության ջոկատներ[12]։

Իրենց հերթին Թուրքիայի պանիսլամիստական գործակալները, նպատակ ունենալով թուլացնել ռուսական հեղափոխության գաղափարական ազդեցությունը Իրանի վրա, աշխատում էին հեղափոխության հակաիմպերիալիստական բնույթը փոխարինել «անհավատների» դեմ մահմեդականների սրբազան պայքարի լոզունգներով։ Իրանում թուրքական կառավարող խմբի պանիսլամիստական քաղաքականության հենարան էին հանդիսանում ռեակցիոն ֆեոդալական և բուրժուա-ազգայնական խավերը, որոնք հանձինս պանիսլամիզմի տեսնում էին իրենցից ժողովրդի զայրույթը հեռացնելու և այն ոչ մահմեդական աշխատավոր խավերի դեմ կրոնական պայքարի կողմը ուղղելու միջոցը։ Այդ խավերը սկսեցին սերտորեն համագործակցել թուրքական օկուպացիոն իշխանությունների հետ։ Թեհրանում թուրքական դեսպանատան կողմից կաշառված մի շարք հետադիմական իրանական թերթեր սկսեցին կատաղի հարձակումներ գործել Ռուսաստանի և Անգլիայի դեմ, կոչ անելով միանալ Թուրքիային և պայքար մղել ընդդեմ «անհավատների»[13]։ Այդ թերթերը միաժամանակ կրոնական անհանդուրժողականության կոչ էին անում բուն Իրանում բնակվող այլադավան ժողովուրդների նկատմամբ։ Այսպես, օրինակ, մի շարք թերթեր հանդես էին գալիս հայերի մասին ստահոդ և թունավոր հոդվածներով, ճգնելով նրանց մեղադրել քաղաքական անբարեհուսության մեջ և այն բանում, որ իբր նրանք Իրանում ունեն անջատողական ձգտումներ և ցանկանում են Ատրպատականը միացնել իրենց ապագա անկախ պետությանը[14]։ Հայկական ջարդերի սպառնալիքը կանխելու համար Կովկասի և Իրանի հայկական մամուլը ստիպված էր տպագրել մեծ քանակությամբ հոդվածներ, որոնցում բացահայտվում էին հակահայկական պրոպագանդայի բուն պատճառները։

1906 թ. ամռանը հեղափոխական շարժումն Իրանում գնալով ավելի հուժկու թափ էր ընդունում։ Օգոստոսի 5-ին շահը ստիպված էր հրամանագիր արձակել սահմանադրություն ընդունելու մասին, իսկ օգոստոսի 19-ին հրապարակվեց իրանական առաջին պառլամենտի՝ մեջլիսի հիմնադրման հայտարարությունը։

Այս իրադարձությունները խուճապ առաջացրին թուրքական կառավարող շրջաններում, մանավանդ որ կայսրության արևելյան մարզերում սկսվեցին

---

10 «Тифлисский листок», 1905, 19 июля.

11 Նույն տեղում, 1906, հունիսի 7։

12 Центральный государственный исторический архив в Ленинграде, ф. 600, оп. 2, д. 1221, թ. 23, 29 (այսուհետև՝ ЦГИАЛ).

13 «Մշակ», 1906, 15 հունիսի, № 129, էջ 3—4։

14 «Մշակ», 1906, 21 ապրիլի, № 84, էջ 3։

գյուղացիական բուռն հուզումներ[15]։ Սուլթանական կառավարությանը ահաբեկում էր նաև այն, որ հարևան երկրում սահմանադրության հաղթանակը կարող էր նպաստել Իրանի և Օսմանյան կայսրության հեղափոխական շրջանների միջև կապի հաստատմանը։ Ստամբուլին հայտնի էր, որ «Իթթիհադ վե Թերաքքի» («Միասնություն և Առաջադիմություն») կոմիտեն ձգտում է սուլթանական դեսպոտիզմի դեմ լայն ճակատ կազմակերպել ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։ Այդ պատճառով երիտթուրքական կուսակցությունը կարևոր նշանակություն էր տալիս իրանական հեղափոխականների հետ շփումներ ունենալու հարցին[16]։ Հայտնի էր նաև, որ երիտթուրքերի Փարիզի կենտրոնը և իրանական հեղափոխականները արդեն գործուն կապեր են պահպանում[17]։

Այս բոլորից ահաբեկված թուրքական կառավարող շրջանները որոշեցին դիմել ավելի կտրուկ քայլերի։ Աբդուլ Համիդը ծրագրեց Իրանում ազատագրական շարժումը սրատել ու ջախջախել ինչպես ինտերվենցիան ուժեղացնելու, այնպես էլ իրանական ֆեոդալա-միապետական ռեակցիային աջակցություն ցույց տալու միջոցով։ Հենց այդ նպատակով 1907 թ. թուրքական ոստիկանությունը Ստամբուլում իրանական դեսպանատան հետ համատեղ ջախջախեց իրանցի վտարանդիների կողմից կազմակերպած «Ազադիյե Իրան» էնջումենը (խորհուրդ, ընկերություն), որի գործունեության նպատակն էր աջակցել Իրանի հեղափոխական շարժմանը[18]։

Այնուհետև 1907 թ. հուլիսին Յավեր փաշան Վանի կողմից ներխուժեց Ուրմիայի արևմտյան շրջանները, Թերգևերում ջախջախեց Ատրպատականի նահանգական էնջումենի կողմից թուրքերի դեմ դուրս բերված զորքերին և գավթեց մի շարք տերիտորիաներ։ Օկուպացված այդ տերիտորիաներում թուրքական զորքերը առանձնակի դաժանությամբ ջախջախեցին հեղափոխական էնջումեններն ու սահմանադրության կողմնակից այլ կազմակերպությունները[19]։ Առանձին վայրերում իրանական զորքերի կողմից դիմադրության փորձ լինելու դեպքում թուրքական հրամանատարները հայտարարում էին, որ դրանց իրենք համարում են շահի դեմ ընդդիմադիր ձգտում արտահայտող էնջումենների զինված բանդաներ, կամ պարսիկ և հայ ֆեդայիներ և իրենց իրավունք են վերապահում վարվել նրանց հետ այնպես, ինչպես խոովարարների ու ավազակների հետ[20]։ Օկուպացիոն իշխանությունները նաև հայտարարում էին, որ իրենց պարտքն են համարում Իրանի սունի բնակչությանը պաշտպանել իրանական հեղափոխականների «բռնություններից ու հալածանքներից»[21]։ Ձավթված տե-

---

15 Տե՛ս K. J. Basmadjian, Le mouvement revolutionnaire en Asie Mineure, „Revue du monde musulman", vol. IV, Paris, 1908, էջ 819—825։

16 Տե՛ս Yusub Hikmet Bayur, նշվ. աշխ., հատ. 2, մաս 1-րդ, էջ 98—99։

17 Celal Bayar, Ben de yazdim, Milli Mucadeleye gidiş, cilt 1, İcinci Baski, Istanbul, 1967, էջ 176։

18 مهدی ملکزاده. تاریخ انقلاب مشروطیت ایران. جلد ۳. طهران ۱۳۳۱، ص ۱۷٤

19 «Русские ведомости», 1907, 20 сентября, № 240; ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1003, թ. թ. 266—267։

20 «Երկրի ձայներ» (շարաթաթերթ), Բ տարի, Թիֆլիս, 1907, 18 հոկտեմբերի, № 25։

21 М. Ардатов, Турецко-персидский пограничный конфликт, «ИШКВО», 1908 № 21, էջ 12—15։

ռիտորիաների բնակչության ռեակցիոն տարրերին, բռնատիրության կողմնակից խաներին ու ֆեոդալներին Թուրքերը զրգռում էին սահմանադրության կողմնակիցների դեմ, կազմակերպում ձերբակալություններ, սպանություններ և այլն[22]։ Շատ հաճախ նրանք այրում էին ամբողջ գյուղեր և իսպառ բնաջնջում բնակիչներին[23]։

Թուրքական զորքերի ինտերվենցիան Իրանում ուղեկցվում էր քրդական ֆեոդալների ելույթներով, որոնք մի կողմից աշխատում էին սանձահարել ու ջախջախել հեղափոխական շարժումը սահմանակից շրջաններում, իսկ մյուս կողմից նպաստում էին Թուրքական զորքերի առաջխաղացմանը իրանական տերիտորիայում։ Այսպես, օրինակ, օգտվելով այն բանից, որ քրդական ֆեոդալները անընդհատ դիմումներ էին հղում Թուրքական իշխանություններին, խնդրելով, որ իրենց ազատեն իրանական հեղափոխականների «բռնություններից», Աբդուլ Համիդը հրամայեց 6-րդ բանակային կորպուսի հրամանատարին գրավել Սերդեշտը, Բանեն, Զահրիքը, Սոմայը և մի շարք այլ վայրեր[24]։

Իրանական հեղափոխությունը ջախջախելու գործում անմասն չէր մնում սաև Թեհրանում Թուրքական դեսպանատունը։ Նա մասնավորապես ապաստան էր տալիս մայրաքաղաքում անկարգությունների ու հակահեղափոխական խռովությունների կազմակերպիչներին և առհասարակ բոլոր հակահեղափոխական տարրերին[25]։

Իր հերթին իրանական ռեակցիան ևս փորձեր էր կատարում դաշինքի մեջ մտնել սուլթանական կառավարության հետ՝ համատեղ ուժերով հեղափոխական շարժումը ջախջախելու համար։ Թեհրանում հայտնի դարձավ, որ Մոհամմեդ-Ալի շահը օգնություն է խնդրել սուլթանից, և Աբդուլ Համիդը խոստացել է 50 հազար լիրա ոսկի և մեծ քանակությամբ զորքեր տրամադրել շահին՝ հեղափոխությունը «համատեղ ուժերով արմատախիլ անելու համար»[26]։

Հեղափոխության դեմ ուղղված երկու միապետների դաշինքի այս փորձը ողջ երկրում առաջ բերեց զայրույթի փոթորիկ։ Պրեմիեր-մինիստր Ամին-էս-Սուլթանը, որի կարգադրությամբ Ստամբուլում իրանական դեսպան Արֆա-էդ-Դոուլեն կապերի մեջ էր մտել սուլթանի հետ, ատրճանակի մի քանի կրակոցներով սպանվեց հեղափոխական ֆեդայիի կողմից[27]։

Անդրադառնալով Թուրքական ինտերվենցիայի հարցին, իրանական պատմաբան Մեհդի Մալեքզադեն իրավացիորեն նշում է, որ Թուրքական զորքերը մեծագույն հարված հասցրին իրանական սահմանադրությանը[28]։

Ինչպես հայտնի է, 1908 թ. հուլիսին երիտթուրքական հեղաշրջման հետևանքով խորտակվեց սուլթան Աբդուլ Համիդ II-ի «զուլյումի» վարչակարգը, և Թուրքիայում հաստատվեցին սահմանադրական կարգեր։ Հարևան երկրում

---

[22] مهدی ملکزاده նշվ. աշխ., հատ. 4, էջ 179։

[23] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1003, л. 266—267։

[24] АВПР, ф. Канцелярия МИД, 1907, д. 32, л. 44։

[25] «Тифлисский листок», 1906, 11 июля.

[26] مهدی ملکزاده նշվ. աշխ., հատ. 4, էջ 179—180. տե՛ս նաև ЦГИАЛ, ф. 600, оп. 4, д. 340, л. 36։

[27] احمد کسروی، تاریخ مشروطهٔ ایران، طهران، ۱۳۱۹، جلد ۲، ص ۲۷۳

[28] مهدی ملکزاده նշվ. աշխ., հատ. 3, էջ 36։

բռնապետության տապալումը, բնականաբար, մեծ արձագանք էր ունենալու Իրանի հեղափոխական շրջաններում։ Ոգևորությունը հատկապես մեծ էր Ատրպատականում, որտեղ նույնիսկ լուրեր տարածվեցին, որ շուտով երիտթուրքական կառավարության զորքերը օգնության ձեռք կմեկնեն ռեակցիայի դեմ մարտնչող Թավրիզի հեղափոխականներին[29]։

Սակայն շատ շուտով պարզվեց, որ «նոր Թուրքիայի» կառավարող շրջանները բնավ մտադիր չեն հրաժարվել Ատրպատականի և Իրանական Քուրդիստանի նկատմամբ մեծապետական-գավթողական հավակնություններից։ Առհասարակ արտաքին քաղաքականության հարցերում երիտթուրքերը ամբողջապես որդեգրեցին իրենց նախորդի ծրագրերը։ «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցության նախաձեռնությամբ Ստամբուլը սկսեց հող նախապատրաստել Իրանի ներքին գործերին միջամտելու համար։ 1908 թ. սեպտեմբերի 13-ին մինիստրների խորհրդի արտակարգ նիստում, որին մասնակցում էին մեծ վեզիրը, ռազմական, ֆինանսների և ներքին գործերի մինիստրները, որոշվեց հայտարարել իրանական կառավարությանը, որ եթե Թավրիզում հեղափոխական ֆեդայիների և կառավարական զորքերի միջև տեղի ունեցող ռազմական գործողությունների հետևանքով թուրքահպատակները վնասներ կրեն, ապա անհապաղ Թավրիզ կուղարկվեն թուրքական զորքեր[30]։ Թեհրանում թուրքական դեսպանատունը ճնշում էր գործադրում շահական կառավարության վրա, պահանջելով թույլատրել Թավրիզ մտցնել «ազգային պահակախումբ», իբր թե թուրքական հյուպատոսությունը և թուրքահպատակներին պաշտպանելու համար[31]։ Իրականում Ստամբուլը հետապնդում էր այլ նպատակներ։ Մասնավորապես 1908 թ. սեպտեմբեր—հոկտեմբեր ամիսներին, երբ Թավրիզում հեղափոխական շարժումը բուռն վերելք էր ապրում, թուրքական էմիսարները գերմանական հետախուզության հետ համատեղ Ատրպատականում սկսեցին հրահրել սեպարատիստական շարժում, որի նպատակն էր այդ նահանգի անջատումը Իրանի կազմից և նրա նկատմամբ թուրքական պրոտեկտորատի հաստատումը։ Երիտթուրքական գործակալությունը Ատրպատականում կոչ էր անում ինքնավարություն ձեռք բերելու համար կազմակերպել համընդհանուր ապստամբություն։ Նրանց կողմից նույնիսկ մշակված էր ապստամբության մանրամասն պլան, որն իրագործելու համար կազմակերպվում էին հատուկ գաղտնի կոմիտեներ, նրանց մատակարարվում էր դրամ, զենք ու զինամթերք և այլն[32]։ Թավրիզի թուրքական գլխավոր հյուպատոս Աբդուլ Քերիմ-բեյը ամենուրեք խոստանում էր, որ Թուրքիան կհովանավորի Ատրպատականին և նրա բնակչությանը կցուցաբերի ամեն տեսակի աջակցություն[33]։ Չբավարարվելով Ատրպատականի ինքնավարության վերաբերյալ քարոզով, շուտով թուրքական գործակալությունը ուղղակի պրոպագանդա ծավալեց երկրամասն Օսմանյան կայսրությանը միացնելու օգտին[34]։

---

29 Նույն տեղում, հատ. 5, էջ 33։

30 «Тифлисский листок», 1908, 17 сентября.

31 ЦГВИА, ф. 2000с, оп. 1, д. 7696, թ. 112։

32 Автономия Азербайджана. «Тифлисский листок», 1908, 11 октября; «Каспий», 1908, 15 октября, № 164.

33 ЦГВИА, ф. 2000с, оп. 1, д. 7696, թ. 110—111; ЦГИАЛ, ф. 560, оп. 28, д. 353, թ. 55—56, 232։

34 ЦГИАЛ, ф. 560, оп. 28, д. 355, թ. 165; տե՛ս նաև М. С. Иванов, Иранская революция 1905—1911 гг., М., 1957, էջ 329—330։

Ինչպես տեսնում ենք, երիտթուրքերն աշխատում էին իրանական ժողովուրդների ազգային-ազատագրական, հակաիմպերիալիստական ու հակաֆեոդալական շարժումն օգտագործել Իրանի նկատմամբ իրենց զավթողական քաղաքական ծրագրերն իրագործելու համար։

Ատրպատականը աննեքսիայի ենթարկելու ուղղությամբ «Միասնություն և Առաջադիմություն» կոմիտեի մշակած ծրագիրը, սակայն, կատարյալ ձախողման մատնվեց, որովհետև ի վերջո այդ նահանգի առաջադիմական տարրերը և հատկապես հեղափոխական շրջանները կռահեցին, թե ինչ է թաքնված երիտթուրքերի՝ այդ ուղղությամբ արված առաջարկությունների ետևում։ Դա ստիպեց Ստամբուլին փոխել իր տակտիկան։ 1909 թ. սկզբներին երիտթուրքական կուսակցությունը Ատրպատականում և ողջ Իրանում բուռն գործունեություն ծավալեց, ամենուրեք հայտարարելով, որ թուրքական կառավարությունը որոշել է վճռական ձևով հանդես գալ իրանական հեղափոխական շարժումը պաշտպանելու դիրքերում[35]։ Խոսելով այն մասին, թե ինչ քաղաքական նպատակներ են հետապնդում երիտթուրքերը սիրախաղ անելով իրանական հեղափոխական շարժման հետ, Ուրմիայում ռուսական փոխ-հյուպատոս Միլլերը դիպուկ կերպով նկատում էր. «Երիտթուրքերը հայտնվել են այստեղ ոչ թե պարսիկ սահմանադրականներին աջակցություն ցույց տալու համար, այլ... հեղափոխական շարժմանը տիրապետելու և այն բացառապես իրենց կառավարության շահերի հունով ուղղելու նպատակով»[36]։ Ի դեպ, այդ նույն տեսակետին էր նաև Վանում անգլիական փոխ-հյուպատոս կապիտան Դիկսոնը[37]։ Կովկասի ռազմական շրջանի հետախուզական բաժնի տեղեկությունների համաձայն իրանական հեղափոխության համար «մարտնչող» թուրքական սպաները մեծ մասամբ խավարամիտ, կասկածելի անցյալ ունեցող, թուրքական սահմանադրության հակառակորդ և սուլթան Աբդուլ Համիդի կողմնակից մարդիկ էին[38], որոնք, ինչպես հայտնի է, մասնակցել էին արյունոտ սուլթանի կողմից կազմակերպված հայկական ջարդերին։

Բոլոր փաստերից երևում էր, որ Իրանում հեղափոխական շարժմանը զարկ տալու պատրվակով երիտթուրքական կոմիտեն նախապատրաստում էր իր կողմից ծրագրված ապստամբությունը՝ Ատրպատականը Իրանից անջատելու և այն Թուրքիային միացնելու պլանը իրականացնելու համար։ Հենց այդ նպատակով 1909 թ. սկզբին Սալոնիկից Էրզրում ժամանեցին և այնուհետև Իրան մեկնեցին երիտթուրքական կենտրոնական կոմիտեի անդամներ, բանակի սպաներ Խալիլ-բեյը, Յակուբ-Ջամիլը, Հիլմի-էֆենդին և Նաջի-բեյը[39]։ Իրանում և մասնավորապես Ատրպատականում քաղաքական աշխատանք տանելու համար երիտթուրքերը այնտեղ գործուղեցին մի շարք պանթուրքական գործիչների։ Նրանց մեջ էր նաև պանթուրքիզմի հայտնի գաղափարախոս Ռեշիդ Սաֆֆեթը, որին հանձնարարված էր պրոպագանդել այն տեսակետը, թե Իրանի թուրքական

---

35 Տե՛ս «Представители Турции и Германии в Персии в роли защитников персидской конституции» «ИШКВО», № 22, 1-я треть, 1908, էջ 34—35; АВПР, ф. Персидский стол, 1909 г., д. 661, թ. 20, 26։

36 АВПР, ф. Персидский стол, 1909 г., д. 661, թ. 96, 117, 141։

37 Նույն տեղում։

38 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1002, թ. 260։

39 Celal Bayar, Նշվ. աշխ., էջ 175—176։ ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1002, թ. 205։

բնակչությունը չի սահմանափակվում միայն Իրանական Ադրբեջանի բնակչությամբ, թե «Իրանում գերակշռող և կենսական տարրը թուրքերն են» և այլն[40]։ Միաժամանակ Էրզրումի ռազմական շտաբում տեղի էր ունենում այն զինվորականների ցուցակագրում, որոնք ցանկություն էին հայտնում որպես կամավորներ մեկնել Իրան[41]։ Սրանց բոլորի առաջ խնդիր էր դրված նպաստել Ատրպատականի «ինքնավարության» գործին, որպեսզի նա միանար իր «արյունակից» ժողովրդի հետ։ Այս ուղղությամբ տարվող քաղաքական աշխատանքը արդյունավետ դարձնելու համար երիտթուրքերը Թավրիզում ստեղծեցին իրենց կոմիտեի մասնաճյուղ[42]։

Չսահմանափակվելով զուտ քաղաքական աշխատանքով, երիտթուրքական գործակալությունը մաքսանենգային ճանապարհով մեծ քանակությամբ զենք էր ներմուծում Ատրպատական և վաճառում տեղական բնակչությանը[43]։ Իսկ Վանում 3ավեր փաշան հայերից բռնագրված զենքը բաժանում էր բոլոր նրանց, ովքեր ցանկանում էին մեկնել Իրան[44]։

Թուրքիան սկսեց ամենաեռանդուն միջամտություն ցույց տալ նաև Թեհրանում ծավալվող իրադարձություններին։ Այստեղ մեծ ակտիվություն էր դրսևորում հատկապես թուրքական դեսպանատունը[45], որը ապաստան էր տալիս իշխանությունների կողմից հալածվող քրեական տարրերին և զանազան խառնակիչների։ Թուրքական գործերի հավատարմատար Սադրեդդին-բեյը խրախուսում էր դեսպանատանը ապաստան գտած ռեակցիոներ Սադր-ուլ-Ուլմի կոչերը, ուղղված քոչվոր ցեղերի առաջնորդներին, որոնցում Սադր-ուլ-Ուլմը հրավիրում էր նրանց զինված ջոկատներով շարժվել դեպի Թեհրան[46]։ Սադրեդդին-բեյը միաժամանակ հեռագրեր էր ուղարկում Ստամբուլ, առաջարկելով զորքերը պատրաստ պահել Թեհրանի վրա արշավելու համար, եթե «դեսպանատունը կարիք ունենա պաշտպանության»[47]։

«Երիտթուրքերի տիրապետության շրջանում թուրքական ռեակցիան,— իրավացիորեն նկատում է Մ. Ս. Լազարևը,— հանդես էր գալիս հարևան Իրանում հեղափոխական շարժման դեմ ոչ միայն ընդհանրապես դեպի դեմոկրատիան իր տածած թշնամանքի և Իրանում տեղի ունեցող իրադարձությունների հեղափոխականացող ազդեցությունը չեզոքացնելու ձգտման պատճառով, այլև այն պատճառով, որ իրանական հեղափոխության հաջողության դեպքում Իրանական Քուրդիստանի նկատմամբ թուրքական զավթողական պլանների իրականացումը կհանդիպեր ավելի մեծ դժվարությունների։ Թուրքական զավթիչների մոտ առանձնակի ատելություն էր առաջ բերում Իրանական Քուրդիստանում և Ադրբեջանում հեղափոխական էնջումենների գործունեությունը՝ այդ շըր-

---

[40] Reşit Saffet, Türklük ve Türkçülük izleri, 1inci kitap, Ankara, 1930, էջ 162—163։

[41] Celal Bayar նշվ. աշխ., էջ 175—176։

[42] «Մշակ», 1909, 28 ապրիլի, № 28։

[43] ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 199, թ. 3, АВПР, ф. Персидский стол, 1909 г., д. 661, թ. 58։

[44] АВПР, ф. Персидский стол, 1909 г., д. 661, թ. 105։

[45] Տե՛ս „White Book", Persia (1909), № 2, էջ 26։

[46] «Մշակ», 1909, 13 մարտի։

[47] Նույն տեղում, 18 մարտի։

ջաններում կարգ ու կանոն հաստատելու և ոտից մինչև գլուխ փտած շահական վարչության դեմ պայքարելու բնագավառում»[48]։

Այսպիսով, ինչպես իրավացիորեն նշել են շատ ուսումնասիրողներ, իշխանության գլուխ անցնելուց հետո երիտթուրքերը վերածվեցին հակահեղափոխականների, ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների կատաղի թշնամիների[49]։

1909 թ. վերջերից սկսած իշխանության ղեկի մոտ գտնվող «Իթթիհադ վե թերաքքի» կուսակցությունը Իրանում արդեն դիմել էր բացահայտ ինտերվենցիայի։ Ռուսական հյուպատոսները տեղեկացնում էին, որ թուրքական օկուպացիոն զորքերի հրամանատարությունը ոչ միայն հակահեղափոխական պայքար է ծավալել «պարսկական ազատության մարտիկների» դեմ, այլև աշխատում է տեղայնացնել ֆեդայիների հեղափոխական գործունեությունը և թույլ չտալ նրա տարածումը մյուս, մասնավորապես թուրքական զորքերի կողմից գրավված շրջաններում[50], որ իրենց հերթին հակասահմանադրական տրամադրություններ ունեցող ռեակցիոներները և խաները, որոնք ակտիվորեն հանդես են գալիս հեղափոխության դեմ, թուրքական զորքերին հրավիրում են իրենց շրջանները[51]։

1908 թ. նոյեմբեր—դեկտեմբերին, երբ Ատրպատականում ռեակցիոն խաները կատաղի պայքար էին մղում հեղափոխական էնջումենների դեմ, թուրքական օկուպացիոն իշխանությունները բացահայտ ձևով նրանց վերցնում էին իրենց հովանավորության տակ։ Հեղափոխականների դեմ պայքարում ջախջախված ռեակցիոն բանդաների պարագլուխները ապաստան էին գտնում թուրքական հյուպատոսություններում[52]։ Խուսափելով վերջնական ջախջախումից, նրանք վերստին հնարավորություն էին ստանում շարունակել զինված պայքարը հեղափոխության դեմ[53]։

Օգտվելով Խոյի, Սալմաստի, Մակուի և մի շարք այլ շրջաններում բորբոքված պայքարից, երիտթուրքերը եռանդուն կերպով պատրաստվում էին գրավել այդ տերիտորիաները։ Այդ մասին հատկապես պերճախոս կերպով վկայում է թուրքական ներքին գործերի մինիստրի 1908 թ. նոյեմբերի 20-ի թվակիր նամակը՝ ուղղված Վանի վալիին (կուսակալ), որի մեջ նա հրամայում էր պատրաստել բավարար քանակությամբ զորքեր «անհրաժեշտության դեպքում» նրանց հիշյալ վայրերը ուղարկելու համար[54]։

1909 թ., երբ Արևմտյան Ատրպատականում պայքարը հեղափոխականների և հակահեղափոխության միջև ավելի թեժ բնույթ ընդունեց, թուրքական զորքերը արդեն բացահայտ կերպով սկսեցին հանդես գալ ռեակցիայի կողմում, համատեղ կերպով մասնակցելով հեղափոխական էնջումենների ջախջախման օպերացիաներին։ Այսպես, նրանք գլխովին ջախջախեցին Խոյի հեղափոխական էնջումենի նախագահ Հայդար-խան Ամու Օղլիի և Դիլմանի էնջումենի նախա-

---

48 М. С. Лазарев, Курдистан и курдская проблема, М., 1964, էջ 182։

49 Այս հարցի կապակցությամբ նորագույն ուսումնասիրություններից տե՛ս Г. З. Алиев, Турция в период правления младотурок, М., 1972, էջ 180—181։

50 АВПР, ф. Персидский стол, 1908 г., д. 656, թ. 136։

51 Նույն տեղում, 1909 г., д. 661, թ. 15—16։

52 Նույն տեղում, 1908 г., д. 656, թ. 113—114, 1909 г., д. 661, թ. 72։

53 Նույն տեղում, д. 661, թ. 96, 1908 г., д. 656, թ. 118։

54 ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1002, թ. 219։

գահ Սայիդ-ուլ-Մեմալիքի ջոկատները, ցրեցին տեղի էնջումենները և հայտարարեցին, որ Դիլման քաղաքի իշխանությունը այսուհետև անցնում է թուրքական նահանգապետին[55]։ Զավթված այդ տերիտորիաներում մտցվեց թուրքական վարչական սիստեմ, նշանակվեցին կայմակամներ և այլն։ Միանգամայն ակնհայտ էր, որ երիտթուրքական կառավարության ինտերվենցիան ուղեկցվում էր Ատրպատականի և Իրանական Քուրդիստանի աստիճանական անեքսիայով։ Ուրմիայում ռուսական փոխ-հյուպատոսը նախազգուշացնում էր Պետերբուրգին, որ եթե թուրքական այդ քաղաքականությունը շարունակվի, ապա շուտով իր հյուպատոսական իրավասության տակ այլևս չի մնա ոչ մի շրջան[56]։ Իրանում գործող բոլոր օկուպացիոն ջոկատների հրամանատարները Ստամբուլից հրաման էին ստացել սուննիների պաշտպանության պատրվակի տակ Ատրպատականում և Քուրդիստանում նոր տերիտորիաներ գրավել։ Թուրքական սպաները հայտարարում էին նաև, որ եթե կուսակցությունների փոխադարձ պայքարի հետևանքով սահմանամերձ տերիտորիաներում ստեղծվի «անիշխանության վիճակ», ապա իրենք զորքեր կմտցնեն այդ շրջանները «կարգ ու կանոնը վերականգնելու համար»[57]։ Միաժամանակ թուրքական գործակալությունը աշխատում էր վարկաբեկել առավել արմատական հայացքներ ունեցող հեղափոխականներին և թշնամանք սերմանել հեղափոխական մոջահիդների (հեղափոխական զինված մարտիկներ) միջև[58]։ Այս ամենին Ատրպատականի նահանգական էնջումենը պատասխանեց զինված պայքարով։ 1909 թ. մայիս—հունիս ամիսներին հեղափոխական ֆեդայիների և թուրք զինվորների միջև արյունահեղ բախումներ տեղի ունեցան Դիլմանի, Ուրմիայի և Սալմաստի շրջակայքում[59]։ Էնջումենների հետ հաշվեհարդար տեսնելու և հեղափոխական տրամադրություններ ունեցող տեղական բնակչությանը ահաբեկելու նպատակով թուրքական իշխանությունները սկսեցին աջակցություն ցույց տալ հակահեղափոխական բոլոր ուժերին, մասնավորապես Ռահիմ-խան Զելեբիանլուի և Նիմեթուլլա-խանի բանդաներին[60], ոտքի հանեցին շեքքաք և մի շարք այլ քրդական ցեղերի, որոնք սարսափելի ավերածության ու կողոպուտի ենթարկեցին Խոյի և Սալմաստի շրջակա գյուղերն ու նրանց բնակիչներին[61]։ Ստամբուլի էմիսարները ներշնչում էին քրդական ֆեոդալներին, որ եթե նրանք օսմանյան հպատակություն չընդունեն և չօժանդակեն «թուրքական» գործին, ապա անխուսափելիորեն կենթարկվեն հեղափոխականների հալածանքներին[62]։ Թուրքական հրամանատարությունը օգնում էր Ատրպատականի և Քուրդիստանի հակասահմանադրական տարրերին կրոնական տիպի հետադիմական, այսպես կոչված, «սուննիական էնջումեններ» կազմակերպելու գործում[63], որոնք գործիք էին հանդիսանալու թուրքերի ձեռքում՝ հեղափոխական էնջումեններին հակակշիռ ստեղծելու, շիաներին ու սուննիներին տարանջատելու, նրանց միջև թշնամանք

55 АВПР, ф. Персидский стол, 1909 г., д. 661, թ. 169։
56 Նույն տեղում, թ. 139։
57 Նույն տեղում, 1908 г., д. 656, թ. 138—139։
58 Տե՛ս «Народы Азии и Африки», 1971, № 5, էջ 87։
59 ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 170, թ. 62—63։
60 АВПР, ф. Персидский стол, 1909 г., д. 661, թ. 121, 123—124։
61 Նույն տեղում, թ. 116։
62 Նույն տեղում, թ. 109։
63 Նույն տեղում, թ. 15—16։

բորբոքելու և, վերջին հաշվով, աշխատավոր խավերին հակաֆեոդալական ու հակաթուրքական պայքարից շեղելու համար։ Սակայն այդ քաղաքականությունը միշտ չէ, որ տալիս էր ցանկալի արդյունքներ։ Քրդական աշխատավոր զանգվածները, որոնք հեղափոխության սկզբնական շրջանում կուրորեն ենթարկվում էին իրենց ցեղապետերին և հանդես էին գալիս հիմնականում ռեակցիայի կողմում, հեղափոխական շարժման ներգործության տակ աստիճանաբար սկսեցին ընդգրկվել ազրարային-գյուղացիական շարժման մեջ և հասկացան, որ այդ շարժման կատաղի հակառակորդներ են ինչպես սեփական ֆեոդալները, այնպես էլ թուրքական զավթիչները։ Այսպես, Հարավային (Մուքրի) Քուրդիստանում Սոուջբուլաղի էնջումենը Ղազի-Ֆաթթահի գլխավորությամբ սկսեց զինված պայքար մղել թուրքերի դեմ։ Ընդհուպ մինչև 1910 թ. դարձյալ նշված շրջանում կատաղի մարտեր էին գնում թուրք զինվորների և հեղափոխական ջոկատների միջև[64]։ Գյուղացիական հակաֆեոդալական բուռն շարժում էր սկսվել նաև Մակուի խանությունում։ Ի վիճակի չլինելով սեփական ուժերով հաշվեհարդար տեսնել այդ շարժման հետ, Մակուի սարդար, ռեակցիոներ էղբալ-ուս-Սալթանեն հրավիրեց թուրքական զորքեր, որոնք տեղական ֆեոդալների բանդաների հետ համատեղ ջախջախեցին գյուղացիական շարժումը և կազմակերպեցին հեղափոխականներին համակրող տեղական բնակչության կոտորած[65]։

Ատրպատականը իրանական պետության կազմից անջատելու և Թուրքիային միացնելու միտումով, ինչպես նաև Իրանի թուրքալեզու ժողովուրդներին հեղափոխության դեմ ոտքի հանելու նպատակով երիտթուրքական գործակալությունը պրովոկացիոն ագիտացիա էր մղում, որ իբր Թեհրանի սահմանադրական կառավարությունը որոշել է բնաջնջման քաղաքականություն վարել ադրբեջանցիների և առհասարակ Իրանի թուրքալեզու ժողովուրդների նկատմամբ։ Այդ առթիվ պանթուրքիստ Ռեշիդ Սաֆֆեթը, որը, ինչպես նշվեց, իրանական հեղափոխության տարիներին երիտթուրքական կոմիտեի կողմից գործուղված էր Իրան՝ պանթուրքական դաղափարներ քարոզելու նպատակով, ուղղակի գրում է, որ 1908 թ. սկսած «Իրանի սահմանադրությունը բացահայտ կերպով պայքարել է այս հսկա զանգվածի դեմ», որ «Թրքության ամենամեծ սպանդանոցներից մեկը և իրանական սահմանադրության զոհը եղել է թշվառ Իրանական Ադրբեջանը»[66]։ Այնուհետև նա շարունակում է, որ Ատրպատականի բնակչության արթնացող ազգային ինքնագիտակցությունը կործանելու և հնարավորություն չտալու համար, որպեսզի նա բարձրաձայն հայտարարի իր իրավունքների մասին, «իրանցիները այլ ելք չգտան, բացի կոտորածի միջոցով Իրանի թուրք տարրը բնաջնջելուց»[67]։

Երիտթուրքական կառավարության ինտերվենցիան վերջնականապես հոդս ցնդեցրեց Ատրպատականի հեղափոխական շրջանների այն մասի հույսերը, որոնք ենթադրում էին, թե ցարական Ռուսաստանին երկրամասից դուրս մղելու և ներքին ռեակցիայի դեմ պայքարելու համար կարելի է ապավինել «սահմա-

---

[64] «Тифлисский листок», 1910, 21 мая.

[65] مهدی ملکزاده, նշվ. աշխ., հատ. 3, էջ 32. ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 170, թ. 105—106։

[66] Reşit Saffet, նշվ. աշխ., էջ 161։

[67] Նույն տեղում։

նադրական Թուրքիայի» կառավարությանը։ Դնալով ուժեղանում էր իրանական հեղափոխականների դժգոհությունը երիտթուրքական կառավարության քաղաքականության և օկուպացված շրջաններում թուրքական քաղաքացիական իշխանությունների բռնությունների նկատմամբ։ Ամենուրեք հեղափոխական շրջանները սկսեցին պայքար ծավալել թուրքական զավթիչների դեմ։ 1910 թ. վերջին կովկասյան մամուլը այդ առթիվ գրում էր, որ «ֆիդայիների գործունեությունը թուրքական ռեժիմից դժգոհ բոլոր տարրերին համախմբելու ուղղությամբ դառնում է ավելի ու ավելի ակնառու»[68]։ Հաճախակի դարձան նաև տեռորիստական ակտերը օկուպացիոն իշխանությունների առավել ատելի աստիճանավորների դեմ[69]։ 1911 թ. Ատրպատականում և Իրանական Քուրդիստանում արդեն ծավալվեց մասսայական հակաթուրքական շարժում, որը և կարևոր դեր խաղաց Իրանում Օսմանյան Թուրքիայի ագրեսիվ զավթողական քաղաքականության ձախողման գործում։

Այսպիսով, 1905—1911 թթ. Իրանական հեղափոխության տարիներին Օսմանյան Թուրքիան՝ հանձինս սուլթան Աբդուլ Համիդ II-ի և երիտթուրքական կառավարությունների, հանդես էր գալիս իրանական ժողովրդի ազգային-ազատագրական, հակաֆեոդալական ու հակաիմպերիալիստական շարժումը խեղդողի դերում։ Ընդ որում, եթե իմպերիալիստական Անգլիան և ցարական Ռուսաստանը Իրանում ինտերվենցիայի դիմեցին միայն 1909 թ., ապա Թուրքիան ձեռնամուխ եղավ այդ քայլին նրանցից նշանակալիորեն ավելի վաղ՝ 1905 թ.։

ИНТЕРВЕНЦИЯ ОСМАНСКОЙ ТУРЦИИ В ИРАНЕ В 1905—1911 гг.

В. А. БАЙБУРТЯН

(Резюме)

В эпоху «пробуждения Азии» Иран был одной из первых стран Востока, где под влиянием русской революции начались мощное антифеодальное и антиимпериалистическое движения. В период иранской революции 1905—1911 гг. правящие круги Османской империи решили прибегнуть к интервенции в Иране с целью разгрома революционного и крестьянского движения в этой стране, предотвращения проникновения через Иран идей русской революции и иранского конституционного движения в Турцию, отвода внимания народных масс империи от внутренних социальных и национальных проблем, а также для осуществления панисламистских захватнических целей в отношении Иранского Азербайджана и Курдистана. При этом турецкая правящая клика целеустремленно осуществляла эту политику не только в период феодально-деспотического режима Абдул-Гамида II, но и в период правления младотурок, которые, маскируясь «революционными» и «освободительными» лозунгами, громили всякое революционное движение в северо-западных районах Ирана и пытались с помощью вооруженных сил и пан-

68 «Тифлисский листок», 1910, 31 декабря.

69 АВПР, ф. Персидский стол, 1911 г., д. 549 л. 28.

тюркистской пропаганды осуществить план отделения Иранского Азербайджана от Ирана и присоединения этого края к Османской Турции. Турецкие правящие круги в годы иранской революции выступали в роли душителя национально-освободительного, антиимпериалистического и антифеодального движения иранского народа. Причем Турция прибегла к контрреволюционной интервенции в Иране значительно раньше, чем царская Россия и Англия.